Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14 ծածկագրով պատվերով տպագրվող նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10 հուլիսի 2018թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Տ. Ղուկասյան / գնահատող /
Շ. Իսախանյան /գնահատող/
Ս. Զաքոյան / բացող /
Գ. Խաչատրյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/14 ծածկագրով պատվերով տպագրվող նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը տեղափոխելու մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Հաշվի առնելով, որ հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվող փաստաթղթերը ստացվել են ժամկետից շուտ՝ գնահատող հանձնաժողովը որոշում է սույն ընթացակարգի N 3-2 արձանագրության 3.1 կետում նշված <<հուլիսի 11-ին ժամը 11:30-ին>> բառերը փոխարինել <<հուլիսի 10-ին ժամը 11:30-ին>> բառերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ

2.1.1 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ.

- Կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.1.2 2-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ի և 3-րդ չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած <<Իրինա Մելքոնյան>> ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

2.1.3 1-ին, 6-րդ և 7-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած <<Սամվել Մարտիրոսյան>> ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, ինչպես նաև այն, որ <<Սամվել Մարտիրոսյան>> ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել հրավերով պահանջվող փաստաթղթերը, հանձնաժողովը որոշեց.

- <<Սամվել Մարտիրոսյան>> ԱՁ-ի հայտը մերժել.
- 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով կասեցնել նիստը և ծանուցել ոչ գնային պայմանները բավարարող գնահատված <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ին և <<Արման Ասմանգուլյան>> ԱՁ-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին, որը տեղի կունենա 2018 թվականի հուլիսի 3-ին ժամը 11:30-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ հասցեում):
- 7-րդ չափաբաժնում հաջորդաբար տեղ զբաղեցնող ճանաչել <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ին և տեղեկացնել, որ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

<<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Տեղեկություններ գների նվազեցման շուրջ բանակցությունների արդյունքների, հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու և պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Ընդունել ի գիտություն, որ

- 2018 թվականի հուլիսի 3-ին 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել է նոր գնային առաջարկ 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ 6-րդ չափաբաժնի մասով՝ 120000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: <<Արման Ասմանգուլյան>> ԱՁ-ն բանակցությունների չի ներկայացել:

3.2 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց.

- Ծանուցել 1-ին և 6-րդ չափաբաժիններում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին (<<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ) ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:
- <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:
- Հիմք ընդունելով Կոմիտեի կողմից 27.06.2018թ. ստացված տեղեկատվությունը՝ <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ կրկնակի հարցում չի կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

4. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ. Բաղինյան)

4.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել.

չափաբաժիններ 1, 2, 4, 5, 6, 7 և 8 - <<ԴԱՍՈ ՊՐԻՆՏ>> ՍՊԸ-ին,

չափաբաժին 3 - <<Իրինա Մելքոնյան>> ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ. Բաղինյան)

5.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև արձանագրության 4-րդ կետով ընդունված որոշումը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել արձանագրության 4.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Բաղինյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների բաժնում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ.Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ.Ղուկասյան

---------- Շ.Իսախանյան

---------- Ս.Զաքոյան

---------- Գ.Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան